Յայսմաւուրքը և տարածվում, իսկ 1401 թ. Գր. Խլաթեցին վերստին խմբագրում է և ավելի հայացնում։ Յայսմաւուրքի գոյության և տարածման պայմաններում փոխվում է Տօնականի բնույթը։ Նրա օգտագործման բնույթի հետ փոխվում է նաև պարունակության համամասնությունը և անվանումը։ Տօնականը աստիճանաբար վերաճում է ճառընտիրի, ընտիր ճառերի ժողովածուի։ ԺԴ դարի մի գրիչ իր ավարտած ձեռագիրն անվանում է «Ճառընտիր և Տաւնականի ձագ կոչի սա», մեկ ուրիշը սուրբ գրքերը թվարկելիս Տօնականի կողքին դնում է նաև Ճառընտիրը. «...Տարէգիրք, մեծ Տաւնականն, Ճառընդիրն, Սարգիս գիրքն» և այլն։

Գ

Ձեռագրի անքակտելի մասն են կազմում Հիշատակարանը և հիշատակագրությունները։ Դժբախտաբար Մշո Տօնականի գլխավոր հիշատակարանը չի գրվել, սակայն պահպանվել են բազմաթիվ հիշատակագրություններ՝ գրչից, որոնք օգնում են պարզաբանելու ձեռագրի գրչության հանգամանքները։ Գրչի հիշատակագրություններին մեծապես օգնում է նաև Մշո Առաքելոց վանքում ձեռագրի գերության ու վերագնման մասին գրված Հիշատակարանը, որը «ըստ ամենայնի պատմական արժեքով մի հիշատակարան է... իր բովանդակությամբ հիշատակության արժանի մի գործ, բարեպաշտության և մշակույթի գնահատության մի կենդանի և հավերժական ապացույց, թե միաբանության Լուսանդի և մասնակցության, և թե բարեպաշտների մասնակցության՝ գնման մեջ»[25]։

Որովհետև հիշատակագրությունների և Հիշատակարանի մեզ անհրաժեշտ մասերին պետք է անդրադառնանք ստորև, կրկնություններից խուսափելու համար այստեղ դրանք չենք բերում։ Անհրաժեշտ է հիշել, սակայն, որ ձեռագրի գրիչը Վարդանն է, իսկ ստացողը Վասուսի և Հռիփսիմեի որդի պատրոն Աստվածատուրը, որին գրիչը շատ հաճախ է հիշատակում. «Ստացաւ սուրբ կտակիս և փափագող յիշատակիս՝ զամէնաւրհնեալ պատրոն Աստուածատուրն և բարի ծնաւղսն իւր յիշեցէք ի Քրիստոս Յիսուս աղաչեմ, և զանպիտան գծագիրս Վարդան և զամենայն աշխարհս հաւատացեալ, և Աստուած զձեզ յիշէ, ամէն»[26]։

Մշո Առաքելոց վանքում գրված Հիշատակարանի և Տօնականի, ավելի քան կես հազարամյակ այդ վանքում պահվելու պատճառով, բանասերներից ոմանք այդտեղ էլ ընդօրինակված են համարում ձեռագիրը։ Տարակարծություններ կան նաև գրության թվականի վերաբերյալ։ Բարսեղ Սարգիսյանի կազմած Վենետիկի ձեռագրաց ցուցակում Ճառընտիրի թվականը նշանակված է «ՈՃԱ—ՈՃԴ (1201—1205)», իսկ գրչության վայրը՝ «Առաքելոց կամ Ղազարու վանքը՝ ի Մուշ»[27]. մինչդեռ Ղ. Ալիշանը այն համարում է «ԺԲ դարու վերջն և հաջորդին սկիզբն գրված»[28]։ Գարեգին Հովսեփյանը «Յիշատակարանք ձեռագրաց»-ի Ա հատորում 1204 թվականի տակ է դրել ձեռագիրը և տեղը դարձյալ համարում

25 Յիշատակարանք, Ա, էջ 721, 722, ծանոթ. 1։ Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 213բ։

26 Գրչի և ստացողի վերաբերյալ հիշատակագրություններ տե՛ս ձեռագրի 3ա, 43բ, 63բ 73բ, 82բ, 93բ, 105ա, 110ա, 130բ, 182ա, 205ա, 225բ, 228ա, 237ա, 243ա, 254բ, 265ա, 270ա, 285ա, 288բ, 323բ, 338ա, 351ա, 376բ, 458ա, 476ա, 484ա, 490բ, 498բ, 534ա, 555բ, 590ա, 601ա էջերում։

27 Բ. Սարգիսյան, Ցուցակ Վենետիկի, Բ, էջ 435, 477։

28 Ղ. Ալիշան, Հայապատում, հտ. Բ, էջ 338, ծանոթ. 1։